Պարսիկների հետ խօրասկան եւ Շխսաբան թաղերում։ Այդ բոլոր թաղերը Սպահանի կամ, ինչպէս մեր պատմագիրները սովոր են ասել, "Շօշի" կենդրոնական թաղերն են։ Այդտեղ Հայերը տներ եւ եկեղեցիներ շինեցին, ինչպէս եւ Ամենափրկիչ անունով մի մեծ եկեղեցի եւ մնացին 51 տարի, բայց Շահաբբաս Բ.ի կամ փոքրի թագաւորութեան ժամանակ՝ Նրանց հանեցին Սպահանի միջից եւ Նոր-Ջուղայի մօտ Արնուն կոչուած տեղում Նոր բնակավայր տուին Նրանց 1650 թուին։ Արնունում Հայերը շինեցին Նոր գեղեցիկ տներ, այգիներ, բուրաստաններ, եկեղեցիներ։ Սպահանից հանելու պատճառն այն էր, որ Հայերը գինի եւ օղի էին ծախում եւ Պարսիկների մէջ արբեցողութիւնը սկսել էր սաստիկ տարածուել։

Ջուղայեցի գաղթականներին Շահաբբաս բոլորովին առանձին բնակեցրեց Սպահանից դուրս Զանդարուդ գետի հարաւակողմում, այն տեղում, որ այժմ կոչւում է Նոր-Ջուղայ։ Գետնի մի մասն Շահն ընծայեց Հայերին, իսկ մի մասն եւս Հայերն իրանք գնեցին։ Եօթը տարուց յետոյ, 1612ին, Շահաբբասը Նոր-Ջուղայի գետնի համար հրովարտակ շնորհեց Հայերին։ Նոր-Ջուղայի հիմնարկութեան մասին մի քիչ յետոյ կը խօսենք մանրամասն, առ այժմ պէտք է ասենք, որ Շահաբբաս մի առանձին խնամքով եւ հոգացողութեամբ տեղաւորեց Ջուղայեցիներին եւ ամէն կերպ օգնութիւն ու դիւրութիւններ ընծայեց Նրանց։